ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

օգոստոսի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ 43/4 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հուլիսի 2-ի №Ե-319-21 գրությունը, որով Ընկերությունը, ելնելով Երևան քաղաքի Մոլդովական 43/4 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ Շենք) կառուցապատողի բացակայության փաստից, խնդրել է թույլատրել Շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնել Շենքի բնակիչների կողմից լիազորված անձ Կարեն Պետրոսյանի (այսուհետ՝ Լիազորված անձ) դիմումի հիման վրա՝ վերջինիս հետ կնքելով սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր,

բ) Ընկերության 2021 թվականի օգոստսի 5-ի №Ե-398-21 և Լիազորված անձի 2021 թվականի օգոստոսի 6-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Շենքի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու նպատակով Կանոնների 13.2 կետով սահմանված դիմում ներկայացնում, էլեկտրական ցանցին միացման պայմանագիր Ընկերության հետ կնքում, միացման վճար վճարում և վճարումը հավաստող փաստաթղթերն Ընկերություն ներկայացնում է Լիազորված անձը.
2) Շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու վճարը հաշվարկվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.
3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև Շենքը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 290 օրը.
4) չի թույլատրվում էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ պայմանագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիազորված անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
օգոստոսի 2021թ.